ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 18 մարտի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» եւ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ների անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» եւ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ները 02.03.2011թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 8-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ եւ 31-րդ հոդվածների պահանջներին:

2. Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից պարզվեց, որ անհատական դիմումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ

մասով, պետք է ընդունել քննության, քանի որ դիմողները պահպանել են ՀՀ սահմանադրական դատարան դիմելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված պայմանները, այն է՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Միաժամանակ, դատական կազմն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ դիմողների նկատմամբ իրավական հետեւանքներ առաջացրել է 2009 թվականի հոկտեմբերի 12-ի դատավճիռը, իսկ մնացած դատական ակտերը ուղղված են նշյալ դատավճռի մեկնաբանմանը, ՀՀ Սահմանադրության գերակայության պահանջներից է բխում նման դիմումի ընդունումն ու վեճին ըստ էության լուծում տալը:

3. Անհատական դիմումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 7-րդ մասի առումով, ենթակա է մերժման, քանի որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում նշված որեւէ նորմատիվ ակտի սահմանադրականությունը որոշելիս սահմանադրական դատարանն է իրավասու պարզել այդ ակտի վիճարկվող դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ ակտի այլ դրույթների սահմանադրականությունը: Այսինքն՝ վիճարկվող դրույթի հետ այլ դրույթների համակարգային փոխկապակցվածությունը որոշում է ՀՀ սահմանադրական դատարանը, ոչ թե դիմողները:

Հետեւաբար, դատական կազմը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, գտնում է, որ առկա է գործի քննությունը մերժելու հիմք՝ դիմողի նկատմամբ վիճարկվող դրույթը կիրառված չլինելու պատճառաբանությամբ:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31, 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ», «Արցախբանկ», «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» եւ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ների անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի առումով, ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

3. Նույն անհատական դիմումով գործի քննության ընդունումը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 55-րդ հոդվածի 7-րդ մասի առումով, մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

18 մարտի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/1-9